

տոյն եզերքը, որ զգաշտն Շիրակայ կ'ընդմիջէ, և անով նաև սահմանաբաժին կ'ըլլայ հոս Օսմաննեանց և Ռուսաց ինքնակալութեանց: Այն շարժուն սահմանին եղերքը նատած յօնութիւն առնելու, յետ այլեայլ մտածութեանց՝ կարգն եկաւ որոշելու թէ անցնիմ արդեզք զայն, եթէ դեռ թափառիմ արդէն գտուած կողմն:

**ԿԱՄԵՒՈՐՈՒԹԻՒՆ  
ԲԱՐԻՈՔ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ  
(Տես Երես 333)**

Մրրկի սպառնալիք:

Այն ծածուկ գժտութիւնը՝ որ քահանային և վարժապետին մէջ ծագեցաւ՝ սեղանին վրայ հետզհետէ զգալի ըլլալով, մեր իշխանին սիրտը կը խոռվէր և համեղ կերակուրներ ուտելու ախորժակ չունենալով՝ զորոնք առատ դիմացը կը շարէին, աւելի ևս կը նեղուէր. վասն զի զինուորական կը թութիւնը իրեն ուսուցած էր ամեն փափկութիւն և զեղխութիւն արհամահել: Աշխարհիս ամեն բաներուն պէս այս սեղանին վախճանն ալ հասաւ, հակառակ ճշմարտութեանս, թէ Մարդ չապրիր որ ուտէ՝ այլ կ'ուտէ որ ապրի: Վասն զի տանուտէր չափազանց ուտելով հանդերձ դարձեալ ուտելեաց վրայ կը մըտածէր ու կ'ըսէր հիւրերուն.

— Տեսաք իմ, ազգատ սեղանին վերջը եկաւ. հիմա կը մնայ երթալ ապակեփակ յերմանոցին քովի սենեակը անուշեղէն ու սուրճ առնելու. ուստի խնդրեմ հետս վար գայիք:

Թէպէտ և հիւր իշխանը ու քահանայն հրաժարեցան այս երկըորդ կոչունքէս, սակայն հմրկ եղաւ տանտիրոջ անուշ թախանձանացը զիջանիլ: Երբ ամենքն ալ հասան պարտիզին մէջ տաճկական ոճով զարդարած մեծ ամարանոցը, նախ բոլոր տղայք անուշե-

ղէններէն իրենց բաժինը առնելով՝ պատուէր ընդունեցան զուրս ելլալ և զանազան խաղերով՝ զուարձանալ: Տղոց երթալէն ետքը սենեկապանը տիրոջը ծխելու երկայն եղէգ մը տալով՝ ականջէն վար բան մը զուրցեց:

— Ո՛հ, ինչուան ե՞րբ պէտք է կրել այս շարունակ ձանձրութիւնը, կանչեց տանտէրը. յետոյ վարժապետին դառնալով ըստ. կալուածոց վրայի ծառայն՝ զոր այսօր արձըկեցի, հիմա եկեր է ինձմէ բարի վկայական ուղելու, իր ըրածշարութիւնը մոռցած. թէպէտ չաժէր որ այն ապիրատին համար մարդ գրիչը ձեռքն առնու, սակայն ես չեմ ուղեր անոր վասար. գնա, յարգոյ վարժապետ, կարգաւորեալ վկայական մը գրէ և վրան իմ կնիքս զարկ, փոյթ տանելով իսկոյն դռնէն զուրս հանելու զանիկայ: Ետքը հիւրերուն. Մտածեցէք մէյ մը, կ'ըսէր, թէ այս ամբարիշտ մարդը ինչպիսի յանդզնութեան ձեռք զարկաւ. նախ անցեալ ձմեռ անտառէս վառելու փայտ գողնալով իմ յատուկ սայլվս ու ձիերովս՝ չար գողակցին տունը կը տանէր որ յետոյ ծախեն. վերջապէս այս գողութիւնը յայտնի եղաւ. բայց ինքը բոլորովին կ'ուրանար. հարի զինքը ձիու խարազանաւ և այնու սիրտս հանդշելով ներեցի ըրածին, շատ աշխատասէր ըլլալուն համար. ետքը ապերախտ ծառայն փոխանակ չնորհակալ ըլլալու ինծի և հաւատարիմ մնալու, սկսաւ ծախել դաշտերուս չոր խոտը, և այն ալ շատ քանակաւ: Բայց վերջապէս համբերութիւնս հատնելով՝ երէկ զինքը լաւ մը յանդիմանեցի և ծառայութենէս ալ հանեցի. ուստի կարծեմ որ ասոր համար զիս մեղադրող չիգտուիր:

— Ես առաջին անգամ այն չարագործը տնէս զուրս կը վարէի, ըստ մեր իշխանը. վասն զի մէկ ծառային անհաւատարմութենէն չար օրինակ առնելով յաճախ ուրիշ ծառայք ալ կ'աւրուին:

— Իմ միտքս ալ սյն էր, պատասխանեց տանտէրը, և հանելով ոսկի մատանին՝ իր կնիքը՝ տուաւ վարժապետին,

որ գող ծառային համար աղէկ վկայական մը պատրաստած ըլլալով, կնքեց զայն . և տանտէրն ալ անոնք ստորագրելով տուաւ սենեկապանին որ գուրս տանի :

Նոյն միջոցին սովորաբար միշտ խաղաղասէր և համբերատար քահանայն ալ չդիմանալով, կծու նայուածքով մը ցըցուց իր դժկամակութիւնը և ըստ տանտիրոջ .

— Իշխան, ես որ ցարդ լրեցի՝ սենեկապանիդ առջև գքեզ ամօթով չձըգելու համար, հիմա յայտնապէս կը զուրցեմ քեզի որ այդ ստորագրութեամբդ և կնքովդ սուտ վկայութիւն մը հաստատեցիր :

Տանտէրը աթոռէն վեր ցատկելով կանչեց .

— Այդպէս, ժողովրդապետ :

— Ժողովուրդս ալ ինձի ատ անունը կու տայ, բայց ոչ այնպէս երեսիս պոռալով, պատասխանեց քահանայն ծանրութեամբ :

Հիւր իշխանը անոնց մէջ տեղը մտած կը ջանար խաղաղընել, պատճառելով իրարու միտքը լաւ չհասկընալը : Վարժապետը քիմին տակէն կը մումար քահանային դէմ, իսկ տանտէրը գարձեալ իր առաջին տեղը նստելով ըստ կարի հանդարտութեամբ ըստ քահանային .

— Ինդրեմ որ քու պատիւդ պահելու համար՝ անիրաւ տեղը զուրցածդ յետո կոշէս :

— Երբեք գէշ բան մը չեմ զուրցած որ յետո կոչեմ, ըստ քահանայն անուշութեամբ . վասն զի Աստուած կը պատուիրէ թէ, Սուտ մի վկայեր :

— Անիկայ իմ ինչ փոյթս է ...

— Աղաչեմ, իշխան, որ թողուս խօսքը լմնցընեմ, ըստ քահանայն անոր խօպը կտրելով և զուրցածը մեկնելով : Ինչ բան որ մարդ իր աչքովը տեսնայ կամ ականջովը լսէ՝ կրնայ վկայութիւն տալ, բայց չտեսած կամ չլած բանին վկայութիւն տուողը կը մեղանչէ . ուստի դու հիմա Աստուծոյ պատուիրանին դէմ գործեցիր սուտին ճշմարտի երեւոյթ տալով :

Տանտէրը այս խօպքին վրայ փոխանակ բարկանալու, ինչպէս որ կը կարծէր վարժապետը, և տանը մէջ իր իշխանութիւնը գործածելու՝ 'ի նշան բարեկամութեան ձեռք տալով քահանային ըստ :

— Սխալեցայ ես, յարգելի տէր, տրամած վկայութեանս գէշ հետեանքը չըմտածելով :

Քահանայն որ միշտ մարդու մը վրայ բարի կը մտածէր, քանի որ անոր յայտնի չարութիւնը իրեն ծանօթ չէր, սխմելով հիմա անոր հաշտութեան համար տուած ձեռքը՝ կ'ըսէր .

— Այս տեսակ սուտ վկայականաց բազմանալուն պատճառաւ և անոնց ընկերութեան բերած վնասը տեսնալով՝ հիմա ճշմարիտներուն ալ հաւատ չըն . ծայուիր : Շատ ուրախ եմ, աղնուական իշխան, որ ճանշար քու սխալմունքդ . բայց կը ինդրեմ որ ասկէ ետքը հեռի կենաս ընկերութեան այսպիսի վնասը բեր առիթներէ : Նոյնպէս կը պահանջեմ քեզմէ, յարգոյ վարժապետ, որ աշակերտացդ աղէկ ուսուցանես Աստուծոյ ութերորդ պատուիրանը : Թէպէտ և տղայըը ստութեան ամեն չար պարագայքը մտածելու կարող չեն, ինչպէս խելքը առած մարդ մը, սակայն հեշտ կրնան ըմբունել անոր ծանրութիւնը և Աստուծոյ օրինացը հետ հակառակելը : Զկայ բնաւ աշխարհիս վրայ այնպիսի մեծ բարիքմը, որ անոր համար եղած սուտը արգարանայ . վասն զի մեղքը ամեն չարեացմէ անհամեմատ մեծ է . չկայ գանձ, չկայ այնպիսի փառք ու պատիւ, որ մեղքին ծանրութեանը հաւասարակիու ըլլայ : Փոյթ տար այս սկզբունքը տղոց սրտին մէջ տպակարութիւնը քան ուրիշ ասոր օգտակարութիւնը քան ուրիշ ամեն յաջողութիւն լեզուի, ձեռաց ու մտաց . գեղեցիկ զիր զրելը կ'ընէ զմարդ գովելի . ճարտար հաշիւ ընելը կը զարմացնէ, և շատ տեսակ լեզուներ խօսիւլը սիրելի կ'ընէ ընկերութեան . սակայն ասոնք առանց կրօնից՝ մարդուս արտաքին զարդ մըն են :

Այս խօպքերուս վրայ վարժապետը

սաստիկ զգացուած քահանային ծռելով կ'ուզէր յայտնել թէ ինքն ալ նոյն կարծիքն ունի: իսկ երկու իշխանք քահանային իրաւունք տալէն ետքը մէջեր նին խօսք բացին վարուցանի, կիժոց և օրագրաց լրերուն վրայօք: Նոյն ատենը քահանայն գնաց ջերմանոցին բոյսերը զննելու. յետոյ մօտեցաւ տղոց քով և անոնց զուարձալի խաղերուն ականատես ըլլալէն ետքը իրեն կանչելով զանոնք հարցուց.

— Ցղայքս, դուք որ այսպիսի գեղեցիկ և ծառազարդ դաշտի մը մէջ կը խաղաք, արդեօք յանուանէ կը ճանչնանք այս ծառերը՝ որ մունջ վկաներու պէս ձեր վրայ կը նային:

իսկ անոնք մէկզմէկ յաղթել ջանալով մի առ մի ծառոց անունները կուտային, և երբ կը սխալէին՝ քահանայն կ'ուզզէր.

— Գու ըսէ, չենրիկոս, ո՞րն է տերեւ չունեցող ու ձմեռը կանանչ մնացող ծառը, հարցուց քահանայն բարեկամ իշխանին մեծ որդւոյն:

— Նոճին, պատասխանեց տղայն:

— Երբ նոճի մը տեսնաս՝ ի՞նչ կը մտածես անոր վրայ:

Ցղայն երկայն ատեն պատասխան մը չկարենալով գտնալ, վերջապէս նոճւոյ վրայ նայելով ըսաւ.

— Գեղեցիկ է նոճին, անուշ ու զօրացոցիչ հոտով, մէկ արմատէ և մէկ զագաթէ կը ձեանայ:

— Ո՞ր կողմանէ օդտակար է:

— Վառելու փայտ տալով:

Այդ բաւական չէ, տղայս, գեռշատ բան կայ զիտնալիք նոճւոյն վրայ: Տես, նոճիէն հիւթ մը կը կաթի՝ որուն խէժ կ'ըսենք, որ աղէկ գործածողին վիրաց առողջարար սպեղանի կ'ըլլայ. անով կ'օծեն տակառներ ու նաւեր ջրէն անվնաս պահելու համար. հիւսը անոր փայտէն կը շինէ որորոց, մահիճ ու դադաղ. այն մոծիրն ալ որ նոճւոյ փայտ վառելու մտեն միսանցքին մէջ կը նստի՝ թանաք շինելու կը ծառայէ, որով ձեր կարդացած գիրքերը տպած են. ասկից զատ իրեն միշտ դալարութեանը և ուղ-

դութեանը պատճառաւ՝ յուսոյ ալ օրինակ է, նման առ Աստուած ուղղեալ սրտի մը:

Կը շարունակուի:

## ՔԱՌԻՖՄԱՆԻ ԹՐՉՈՂ ՄԵՔԵՆԱՅՆ

Յետին ձարտարութեանց Հանդիսին՝ լոնտրայի թիւրեղեան պալատին մէջ մէկ քանի մեքենաներ տեսնուեցան, որոնք օդային նաւարկութեան յառաջադիմութեան հաւաստիք մը կ'ընծայեն: Անտարակոյսէ որ բուն օդային նաւարկութեան մը գործադրութիւնը զեռ ևս անկարելի է, վասն զիշատ մը գժուարութիւնք կան՝ որոնց յաղթել կարելի չէ եղած զեռ ևս. ՚ի վերայ այսր ամենայնի չենք կրնար ըսել որ այն մտածութիւնը բանաստեղծական երևակայութեան մը ծնունդ միայն ըլլայ, վասն զի ուսումնական սկզբանց հետ պինդ շաղկապեալ է: Երկայն կ'ըլլայ զանոնք հոս յիշել. այս միայն ըսենք որ ամեն օդապարիկ գունտ օդուն մէջ բարձրանալով՝ ի կախ կը մնայ՝ ցորչափ որ անոր տեղափոխած օդուն զանգուածը իր յատուկ ծանրութեանը հաւասար է. այն ատեն հանդարտաբար, ինչպէս ձուկ մը ջրին մէջ, ասանկ ալ ինքը օդուն մէջ կը լողայ: Բայց ինչպէս որ մեռած ձուկ մը հոսանքը կ'առնէ կը տանի, և հոսանքէն ոչ աւելի շուտ և ոչ աւելի դանդաղ կ'երթայ, ասանկ ալ կ'ընէ օդապարիկ գունտը: Ոչ առագաստ և ոչ զեկ կը ծառայեն ասոր՝ օդուն մէջ, ինչպէս մեռած ձկան ալ ջրին մէջ ծառայել չեն կրնար: Անկարելի բան մընէ օդապարիկ գունտ մը կառավարել ցորչափ որ հովս է միայն շարժիչ ուժը. սակայն զիւրին է անոր առաջնորդել սովորական զեկի մը նման գործիքով, երբ անանկ ուժ մը ըլլայ զինքը շարժովը՝ որ օդէն անկախ ըլլայ, ինչպէս օրինակի համար շոգին:

Արդ թեթև մը նկարագրենք քառականի միշտ մեծ պատկերքնիս